

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ

ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունը,

ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագիր,

պայմանավորվեցին հետևյալի մասին:

Հոդված 1

Համաձայնագրի գործողությունը անձանց նկատմամբ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Համաձայնագրի գործողությունը հարկերի նկատմամբ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի, կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելածի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելածի նկատմամբ հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանի Հանրապետության դեպքում՝

- i) շահութահարկ,
- ii) եկամտահարկ,
- iii) գույքահարկ,
- iv) հողի հարկ,

(այսուհետ՝ «հայկական հարկ»).

բ) Արաբական Միացյալ Էմիրությունների դեպքում դեպքում՝

- i) շահութահարկ,
- ii) եկամտահարկ,
- iii) լրացուցիչ գանձումներ.

(այսուհետ՝ «Արաբական Միացյալ Էմիրությունների հարկ»):

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև նույնական կամ ըստ էության համանման ցանկացած հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կձանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված էական փոփոխությունների մասին:

Հոդված 3

Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները ենթատեքստից կախված նշանակում են Հայաստանի Հանրապետություն կամ Արաբական Միացյալ Էմիրություններ,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն,

գ) «Արաբական Միացյալ Էմիրություններ» տերմինը աշխարհագրական իմաստով օգտագործելիս նշանակում է Արաբական Միացյալ Էմիրությունների տարածք, ներառյալ իր տարածքային ջրերը, կղզիները, օդային տարածքը, տարածքային ծովը, ինչպես նաև մայրցամաքային շելֆը և դրանց բնական պաշարները, որոնց նկատմամբ Արաբական Միացյալ Էմիրությունները իրականացնում են իրենց ինքնիշխան իրավունքները՝ միջազգային իրավունքի համաձայն,

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքներով իր կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա,

զ) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով կամ ճանապարհային փոխադրամիջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

թ) «հարկ» տերմինը ենթատոքստից կախված նշանակում է «Հայաստանի հարկ» կամ «Արաբական Միացյալ Էմիրությունների հարկ»,

ժ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

(i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ,

(ii) Արաբական Միացյալ Էմիրությունների դեպքում՝ ֆինանսների և արդյունաբերության նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչ:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագիրը ցանկացած պահի կիրառելիս, դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պահին այդ Պետության օրենքով տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը, ընդ որում, այդ Պետության համապատասխան հարկային օրենքներով սահմանված ցանկացած տերմինի նշանակությունը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինին տրված նշանակության նկատմամբ:

Հոդված 4

Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է.

ա) Հայաստանի դեպքում՝ ցանկացած անձ, որը Հայաստանի հարկային օրենքների համաձայն ենթակա է հարկման Հայաստանում իր մշտական բնակության, բնակման, ղեկավարման վայրի, ստեղծման վայրի կամ որեւէ այլ համանման չափանիշի հիման վրա,

բ) Արաբական Միացյալ Էմիրությունների դեպքում՝ Արաբական Միացյալ Էմիրություններում մշտական բնակություն ունեցող կամ Արաբական Միացյալ Էմիրությունների քաղաքացիությունն ունեցող ցանկացած անձ և Արաբական Միացյալ Էմիրություններում ստեղծված ընկերություն:

2. 1-ին կետի նպատակնով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը ներառում է.

ա) այդ պետության կառավարությունը և նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ ֆինանսական հաստատությունը,

բ) այդ պետության հանրային իրավունքի համաձայն այդ պետությունում ստեղծված կառավարական հաստատությունը:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ մշտապես բնակվում է, իսկ եթե նա մշտապես բնակվում է երկու պետություններում, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

բ) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա պետություններից ոչ մեկում մշտապես չի բնակվում, նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պայմանավորվող պետություններում էլ կամ նրանցից և ոչ մեկում սովորաբար չի բնակվում, նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է.

դ) եթե նրա կարգավիճակը չի կարող որոշվել c) ենթակետի դրույթների համապատասխան, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:

4. Այն դեպքում, երբ 1 և 2 կետերի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանա-

վորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի օրենքի համաձայն ստեղծված է:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) ղեկավարման վայր

բ) մասնաճյուղ

գ) գրասենյակ

դ) գործարան

ե) արհեստանոց, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանոց, քարհանք կամ բնական պաշարները մշակելու կամ արդյունահանելու ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման օբյեկտը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը, բայց միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է ինը ամիսը:

4. Ձեռնարկության կողմից աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով ծառայությունների մատուցումը, ներառյալ՝ խորհրդատվական ծառայությունները, երբ այդ բնույթի գործունեությունների տևողությունը երկրում (միևնույն կամ դրա հետ կապված նախագծի համար) ցանկացած 12 ամսյա ժամանակահատվածում գերազանցում է վեց ամսյա ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները:

5. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին, «մշտական հաստատություն» չի համարվում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակման նպատակով,

դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահումը բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահումը բացառապես a/-e/ ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար, պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

6. Չնայած 1 և 2 կետերի դրույթներին, այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 8 կետը) տարբերվող անձը գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը հիշատակված պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության կապակցությամբ, եթե այդպիսի անձը.

ա) ունի և սովորաբար իրականացնում է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում այդպիսի ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, բացառությամբ, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 5 կետում նշվածով, որը եթե անգամ և իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության,

բ) չունի այդպիսի իրավասություն, սակայն սովորաբար պահում է առաջինը հիշատակված Պետությունում այդպիսի ձեռնարկությանը պատկանող ապրանքների և արտադրանքի պահեստ, որտեղից նա այդպիսի ձեռնարկության անունից կանոնավոր կերպով ապրանքներ և արտադրանք է մատակարարում,

գ) չունի այդպիսի իրավասություն, սակայն սովորաբար ապահովում է առաջինը հիշատակված Պետությունում պատվերներ ամբողջությամբ կամ համարյա ամբողջությամբ ձեռնարկության համար կամ այդ ձեռնարկության և այլ ձեռնարկությունների համար, որոնք վերահսկվում են նրա կողմից կամ ունեն վերահսկողական իրավունք նրա մեջ,

դ) այդպես գործելով արտադրում կամ մշակում է առաջինը հիշատակված Պետությունում այդ ձեռնարկության համար այդ ձեռնարկությանը պատկանող ապրանքները կամ արտադրանքը:

7. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից, Պայմանավորվող պետության ապահովագրական ձեռնարկությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, համարվում է մշտական

հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող պետությունում, եթե այդ մյուս պետությունում այն անկախ գործակալի կարգավիճակ ունեցող անձից (որին վերաբերում է 8 կետը) տարբերվող անձի միջոցով ընդունում է ապահովագրական վճարներ կամ ապահովագրում է այնտեղ տեղակայված ռիսկերից:

8. Չեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ պետությունում բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

9. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին չի դարձնում այդ ընկերություններից որևէ մեկին մյուսի մշտական հաստատություն:

Հոդված 6

Եկամուտ անշարժ գույքից

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում, սակայն այդպիսով գանձվող հարկը ենթակա է նվազեցման այդպիսի հարկի գումարի 50 տոկոսի չափով:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, օդանավերը և ճանապարհային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. Անկախ սույն Հոդվածի 1 կետի դրույթներից Պայմանավորվող պետության կառավարության, քաղաքական ստորաբաժանման, տեղական իշխանության մարմնի կամ ֆինանսական հաստատության կողմից անշարժ գույքի վարձակալության տրամադրելուց ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն ռեզիդենտության պետությունում:

5. 1 և 3 կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միմիայն այդ պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում չի իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է վերը նշված ձեռով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում իրականացնում է այդ պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որն այն կարող էր ստանալ լինելով ինքնուրույն ու առանձին ձեռնարկություն, իրականացնելով նույն կամ համանման պայմաններում նույն կամ համանման գործունեություն և գործելով լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է դուրս գրել այդ մշտական հաստատության ձեռնարկատիրական նպատակներով կրած ծախսերը, ներառյալ այդ նպատակներով կրած կառավարչական և րնդհանուր վարչական ծախսերը, որոնք կատարված են ինչպես այն պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլուր, հաշվի առնելով դիտարկվող Պայմանավորվող պետության համապատասխան օրենքները:

Սակայն, չի թույլատրվում նվազեցնել այն գումարները, որոնք մշտական հաստատության կողմից վճարված են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկությանը՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիների, հոնորարների կամ այլ համանման վճարումների տեսքով, մատուցված ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի՝ մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց տոկոսների տեսքով: Նմանապես, ոչ մի գումար չի համարվի ընդունված մշտական հաստատության շահույթները սահմանելիս պահանջված գումարների նկատմամբ, (այլ կերպ քան փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) մշտական հաստատության կողմից ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին, պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիի, հոնորարների կամ նման վճարումների միջոցով, կամ մատուցած հատուկ ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի միջոցով, կամ (բացառությամբ բանկերի) մշտական հաստատությանը տրամադրված փոխառության համար տոկոսների միջոցով:

4. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

5. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է որոշել մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ենթամասերի միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում բովանդակված սկզբունքներին:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշվում է տարեց տարի միեւնույն եղանակով, եթե այն փոխելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Միջազգային փոխադրում

1. Միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործումից

Պայմանավորվող պետության ձեռնարկության առաջացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

2. Սույն հոդվածի նպատակներով միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից առաջացած շահույթը ներառում է.

ա) նավերի կամ օդանավերի առանց անձնակազմի վարձակալության տրամադրելուց առաջացած շահույթը,

բ) կոնտեյներների՝ ներառյալ տրեյլերները և ապրանքների ու արտադրանքի համար փոխադրման համար օգտագործվող կոնտեյներներին վերաբերող սարքավորումների օգտագործումից, սպասարկումից կամ վարձակալության տալու ստացված շահույթը,

գ) այլ ձեռնարկության անունից տոմսերի վաճառքից առաջացած շահույթը,

դ) բանկում դեպոզիտ դրված գումարների առնչությամբ անմիջապես ձեռնարկությանը պատկանող տոկոսները,

ե) երրորդ ասանց մատուցված տեխնիկական սպասարկման ծառայությունների դիմաց ստացված շահույթը, երբ այդպիսի շահույթը ստացվում է այնպիսի գործունեությունից, որը վերաբերում է միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործմանը:

3. 1 և 2 կետերի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

Փոխկապակցված ձեռնարկություններ

1. Այն դեպքում, երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և երկու դեպքերում էլ երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են անկախ ձեռնարկությունների միջև ստեղծված պայմաններից տարբերվող պայմաններ, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման

ձեռով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում այն շահույթը, որից մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս պետությունում և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Համաձայնագրի այլ դրույթները և Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կարող են խորհրդակցել միմյանց հետ:

Հոդված 10

Շահաբաժիններ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից այդ շահաբաժինների փաստացի սեփականատեր հանդիսացող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս ետությունում: Սակայն, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքներին համաձայն, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 3 (երեք) տոկոսը:

2. Անկախ սույն հոդվածի 1 և 3 կետերից մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը, նրա քաղաքական ստորաբաժանմանը կան ֆինանսական հաստատությանը վճարված շահաբաժինները ազատվում են հարկումից շահաբաժինների մասով:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից, «jouissance» բաժնետոմսերից կամ «jouissance» իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ այլ, պարտապահանջ չհանդիսացող շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որն ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պայմանավորվող Պետության հարկային օրենքների, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7 հոդվածի կամ 14 հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պայմանավորվող պետությունը չի կարող ենթարկել որևէ հարկման ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պայմանավորվող պետության շահաբաժինների փաստացի սեփականատեր հանդիսացող ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11

Տոկոսներ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և այդպիսի տոկոսների փաստացի սեփականատեր հանդիսացող մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված տոկոսները ենթակա են հարկման միայն այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, եւ, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները, ինչպես նաև այն եկամուտը, որը ենթակա է նույն հարկային կարգավորման, ինչ որ դրամային միջոցների փոխառության

դիմաց եկամուտը՝ այն Պայմանավորվող պետության հարկային օրենքներով, որտևառաջացել է այդ եկամուտը: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն Հոդվածի նպատակով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ:

5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է: Սակայն, այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Այն դեպքում, երբ վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ, կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, պարտապահանջին վերաբերող վճարված տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջևնաճան հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 12

Ռոյալթի

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետությանը վճարվող ռոյալթին ենթակա է հարկման միմիայն այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5% (հինգ տոկոսը):

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է փոխհատուցման ձեռով ստացած ցանկացած տեսակի վճարում՝ գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների և հեռուստատեսային և ադիոհեռուստատեսային հեռարձակման հետ կապված կինոնկարների, ձայնաթերթերի և պատճենահանման այլ միջոցների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության (նոու-հաու) համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով և իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում է ռոյալթին իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է: Սակայն, այն դեպքում, երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց կապակցությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Այն դեպքում, երբ վճարողի և ռոյալթիի փաստացի սեփականատիրոջ, կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների

ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13

Գույքի արժեքի հավելած

1. 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելածը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի, կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային պատկանող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելածը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելածը ենթակա է հարկման միմիայն այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում օգտագործվող նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների, կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից ստացված արժեքի հավելածը ենթակա է հարկման միմիայն այդ պետությունում:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը:

Հոդված 14

Անկախ անձնական ծառայություններ

1. Մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միմիայն այդ պետությունում, բացառությամբ հետևյալ դեպքերից ցանկացածից, երբ այդպիսի

եկամուտը կարող է նույնպես հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում՝

ա) եթե նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունը իրականացնելու նպատակով կանոնավոր կերպով իր տրամադրության տակ ունի հաստատուն բազա: Այդ դեպքում այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ հաստատուն բազային, կամ՝

բ) եթե նրա ներկայությունը մյուս Պայմանավորվող պետությունում դիտարկվող ֆինանսական տարում ընդհանուր առմամբ հավասար է կամ գերազանցում է 183 օրը ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները. այդ դեպքում, այդ մյուս Պայմանավորվող պետությունում կհարկվի միայն, այն եկամուտը, որը ստացվել է այդ մյուս պետությունում իրականացվող գործունեությունից վերը նշված ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների ընթացքում.

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժերի և հաշվապահների անկախ գործունեությունը:

Հոդված 15

Կախյալ անձնական ծառայություններ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների դրույթները, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միմիայն այդ պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միմիայն առաջինը հիշատակված պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարում գտնվում է մյուս Պայմանավորվող Պետությունում ընդհանուր առմամբ 183 օր չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, միջազգային փոխադրումներում շահագործվող նավի, օդանավի կամ ճանապարհային փոխադրամիջոցի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որը այդ պետության ձեռնարկության վարձու աշխատողն է, որի հիմնական գործունեությունը կազմում է միջազգային փոխադրումներում օդանավերի շահագործումը կարող վարձատրություն է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող պարտականությունների համար ենթակա չէ հարկման այդ մյուս պետությունում այդպիսի պարտականությունների համար ստացված վարձատրությունների առնչությամբ:

Հոդված 16

Տնօրենների հոնորարներ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

Հոդված 17

Արտիստներ և մարզիկներ

1. Չնայած 14 և 15 հոդվածների դրույթներին, Պայմանավորվող պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի մշակ (ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը) կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի մշակի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի մշակին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Համաձայնագրի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի մշակի կամ մարզիկի գործունեությունը:

վճարումներից, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. 1-ին կետում չընդգրկված զբաղմունքից ստացված դրամաշնորհների, կրթաթոշակների և վճարումների համաձայն, 1-ին կետում նախանշված ուսանողը կամ ստաժորը ուսման կամ մասնագիտացման ընթացքում, միաժամանակ, պետք է իրավունք ստանա որոշ արտոնությունների, ազատումների կամ նվազեցումների այն հարկերի առնչությամբ, որոնցից օգտվում են տվյալ ժամանման Պետության ռեզիդենտները:

Հոդված 22

Այլ եկամուտ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միմիայն այդ պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ մյուս պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով կիրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվել է եկամուտը իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 23

Գույք

1. 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի, կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի

3. Չնայած 1 և 2 կետերի դրույթներին, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից՝ որպես արվեստի մշակ կամ մարզիկ անձնական գործունեությունից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ գործունեությունը իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետությունների կողմից հաստատված մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Հոդված 18

Կենսաթոշակներ և անուիտետներ

Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ֆիզիկական անձին նախկինում կատարված վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները, ինչպես նաև անուիտետները ենթակա են հարկման միմիայն այդ Պայմանավորվող պետությունում:

Հոդված 19

Պետական ծառայություն

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միմիայն այդ պետությունում:

բ) Սակայն, այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում և այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) հանդիսանում է այդ պետության քաղաքացին, կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության, կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից, կամ նրանց կողմից ստեղծած հիմնադրամներից այդ պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված որեւէ կենսաթոշակ ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն, այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի և համանման այլ վարձատրությունների, ինչպես նաև կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 20

Դասախոսներ և գիտնականներ

1. Մինչև Պայմանավորվող պետություն ժամանելուն անմիջապես նախորդող պահը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացած կամ այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը, որը առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում է գտնվում վերջինիս իրավասու մարմինների կողմից ճանաչվող ցանկացած համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ այլ համանման ուսումնական հաստատության հրավերով, բացառապես այդպիսի ուսումնական հաստատությունում դասավանդման կամ հետազոտման կամ երկուսի նպատակով, առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում ազատվում է հարկումից այդ Պետությունում այդպիսի դասավանդման կամ հետազոտումների համար ստացված վարձատրությունների գծով՝ իր պարտականությունների ստանձման ժամկետից 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում հետազոտություններից ստացված եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունները ֆիզիկական անձի կողմից հիմնականում անց են կացվել որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 21

Ուսանողներ

1. Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ և որը գտնվում է առաջինը հիշատակված պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված

ունեցած հաստատուն բազային պատկանող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով, օդանավերով և ճանապարհային փոխադրամիջոցներով ներկայացված գույքը և այդպիսի նավերի, օդանավերի և ճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանը պատկանող շարժական գույքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում այդպիսի գույքի սեփականատեր հանդիսացող ձեռնարկությունը:

4. Այնպիսի ընկերության բաժնետոմսերով կամ այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը, որի ակտիվները գլխավորապես կազմված են Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ պետությունում:

5. Սույն Հոդվածի դրույթները չեն կիրառվում, եթե գույքի փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետությունն է, նրա քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ ֆինանսական հաստատությունը՝ այդ դեպքում այդպիսի եկամուտը ենթակա է հարկման ռեզիդենտության պետությունում:

6. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

Հոդված 24

Կրկնակի հարկման բացառում

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստանում է եկամուտ կամ տնօրինում է գույք, որոնք սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը հիշատակված պետությունը թույլատրում է.

a) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում՝ այդ մյուս պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով.

b) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում՝ այդ մյուս պետությունում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն, երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրելի է այն եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի որեւէ դրույթին համապատասխան Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը ազատված է հարկումից այդ

պետությունում կամ առկա է եկամտի հարկի կամ գույքի հարկի նվազեցում այդ պետությունում, ապա այդպիսի պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը, ինչպես նաև հարկի նվազեցված գումարը:

Հոդված 25

Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության ազգային անձինք: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին, սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է լինի պակաս բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս պետության ձեռնարկության հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին՝ քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրելու, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտներին կամ վերահսկվում է նրանց կողմից, չեն ենթարկվում առաջինը հիշատակված պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված պետության այլ համանման ձեռնարկությունները:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 6-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները,

ռոյալթին և այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ պարտքը առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին:

5. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են սույն Համաձայնագրում ներառված հարկերի նկատմամբ:

Հոդված 26

Փոխադարձ համաձայնեցման ընթացակարգ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, այդ պետությունների ներքին օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն իրականացվում է անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքում առկա որեւէ ժամանակային սահմանափակումներից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

Հոդված 27

Տեղեկատվության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություն, որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրի կամ Համաձայնագրում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքների դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով այդ օրենքներով սահմանած հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի, ինչպես այդ պետության ներքին օրենքների սահմաններում ստացված տեղեկատվությունը և կարող է հայտնվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ՝ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Համաձայնագրով ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ, կամ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկատվությունը օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկատվությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

a) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներին և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ.

b) ներկայացնելու տեղեկատվություն, որը հասանելի չէր այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

c) ներկայացնելու տեղեկատվություն, որը բացահայտում է որեւէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

Հոդված 28

Ռիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում ռիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունների վրա:

Հոդված 29

Հատուկ դրույթներ

4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունից ստացված ցանկացած եկամուտ, ներառյալ՝ այդ մյուս պետությունում անշարժ և շարժական գույքից ստացված արժեքի հավելվածը ենթակա է հարկման միմիայն առաջինը հիշատակված պետությունում:

Հոդված 30

Ուժի մեջ մտնելը

1. Պայմանավորվող պետությունները գրավոր կժամուցեն միմյանց ռիվանագիտական խողովակներով սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իրենց օրենքներով պահանջվող ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի այդ ծանուցումներից վերջինի ստացման օրվանից և նրա դրույթները կգործեն երկու Պայմանավորվող պետություններում.

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ հաշվանցված գումարների նկատմամբ,

(ii) եկամտի և գույքի հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային ժամանակահատվածների նկատմամբ:

Հոդված 31

Համաձայնագրի գործողության տևողությունը և գործողության դադարեցումը

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա հինգ տարվա ընթացքում և կշարունակի իր գործողությունը անորոշ ժամանակով, մինչև Պայմանավորվող պետություններից մեկը գրավոր չծանուցի մյուս Պայմանավորվող պետությանը դրա գործողության դադարեցման մասին ոչ ուշ, քան ընթացիկ օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Համաձայնագիրը կդադարեցնի իր գործողությունը երկու Պայմանավորվող պետություններում.

(i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագիր ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ հաշվանցված գումարների նկատմամբ,

(ii) եկամտի և գույքի հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագիր ուղարկելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային ժամանակահատվածների նկատմամբ:

Ի վկայություն որի, երկու Պայմանավորվող պետությունների համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Արու Դաբի քաղաքում 2002 թվականի ապրիլի -ին, երկու բնօրինակով, հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Տարածայնություն առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝


ԿԱՐԵՆ ԸՇՍԱՐԻՏՅԱՆ



Առևտրի և տնտեսական
զարգացման նախարար

Արաբական Միացյալ Էմիրությունների
կառավարության կողմից՝

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱԼՖԱՆ ԲԻՆ
ԽԻՐԲԱՇ



Ֆինանսների և արդյունաբերության
պետ նախարար

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արարական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագիրը կնքելու պահին ներքոստորագրյալները համաձայնեցին առ այն, որ հետեւյալը կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը.

Հոդված 2-ի առնչությամբ՝

Պայմանավորված է, որ «քաղաքական ստորաբաժանում» տերմինը Արարական Միացյալ Էմիրությունների դեպքում նշանակում է յոթ առանձին Էմիրություններ եւ դրանց տեղական կառավարման մարմիններ:

Հոդված 3-ի 2-րդ կետի առնչությամբ՝

Պայմանավորված է, որ 3-րդ կետի դեպքում Պայմանավորվող կողմի կողմից վճարված տոկոսները ենթակա են հարկման այդ կողմի պետությունում՝ այդ պետության օրենսդրության համաձայն՝ տոկոսների ստացման հետ կապված բոլոր կատարված ծախսերը նվազեցնելուց հետո:

Հոդվածի 11-ի առնչությամբ՝

պայմանավորված է, որ դիվանագիտական ներկայացուցչություն-ների եւ հյուպատոսական հաստատությունների կողմից դեպոզիտ հաշիվներից առնչությամբ ստացված տոկոսները ազատվում են հարկումից այդպիսի ներկայացուցչության կամ հաստատության նստավայր հանդիսացող Պայմանավորվող կողմի կողմից:

Հոդվածի 12-ի 4-րդ կետի առնչությամբ՝

Պայմանավորված է, որ 4-րդ կետի դեպքում Պայմանավորվող կողմի կողմից վճարված ռոյալթիները հարկվում են այդ Պետությունում՝ այդ Պետության օրենսդրության համաձայն՝ ստացման հետ կապված բոլոր կատարված ծախսերը նվազեցնելուց հետո:

Հոդված 29-ի առնչությամբ՝

Կազմակերպությունների ցանկը, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի դրույթները, պարբերաբար համաձայնեցվում են Պայմանավորվող Կողմերի կողմից:

Ի վկայություն որի, երկու Պայմանավորվող կողմերի համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն արձանագրությունը:

Կատարված է Աբու Դաբի քաղաքում, 2002 թվականի ապրիլի 22 ին, երկու բնօրինակով՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Տարածայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝

ԿԱՐԵՆ ԸՇՍԱՐԻՏՅԱՆ



Առևտրի և տնտեսական զարգացման
նախարար

Արաբական Միացյալ Էմիրությունների
կառավարության կողմից՝

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱԼՖԱՆ ԲԻՆ

ԽԻԲԲԱԸ



Ֆինանսների և արդյունաբերության
պետնախարար